Ծնողական ժողովի թեման- **Ապահով համացանց**

11 դասարանի դասղեկ- Լիլիթ Դավթյան

Ժողովի ձևը- համակցված

Տևողությունը -45 րոպե

Անցկացման վայրը-համակարգչային կաբինետ

Կահավորումը - համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ, պաստառ, մարկեր, թել, կծիկ, թղթե «վիրուս»

Ժողովի նպատակը և խնդիրները

1.Ընդլայնել ծնողների գիտելիքները համացանցի և դրա ծառայությունների մասին:

2.Իմանալ համացանցի օգտակար և վնասակար կողմերը:

3.Արժևորել համացանցի դերը տեխնոլոգիական նվաճումների դարում:

4.Իրազեկել ապահով համացանցի կանոնների մասին:

5.Կարողանալ ապահովել երեխայի անվտանգությունը համացանցից օգտվելու ժամանակ :

6.Ձևավորել արժեքային համակարգ. հոգատար վերաբերմունք ունենալ համացանցից օգտվողների և նրանց շրջապատում գտնվող մարդկանց առողջության նկատմամբ

Ժողովի ընթացքը

1.Ներածական մաս

Այսօր ես համացանցի օգնությամբ,հաղորդագրությամբ ձեզ հրավիրեցի մեր դասարանի արտահերթ ծնողական ժողովի: Եվ հրավիրեցի համակարգչային կաբինետ :Կարծում եմ ,բոլորը գուշակեցին ժողովի թեման: Այո, «Ապահով համացանց» այսպես է կոչվում մեր այսօրվա ծնողական ժողովի թեման: / սլայդ 1-3 /

Դեռահասների համար ազատ ժամանակի ճիշտ օգտագործումը իրատեսական խնդիր է: փոխվել են ժամանակները, փոխվել է սերունդ,փոխվել են նաև նախասիրությունները, հետաքրքրասիրությունների շրջանակը: Ընթերցասեր աշակերտին փոխարինելու է եկել տեխնոլոգիական նորարարությանը տիրապետող աշակերտը: Խելացիները համացանցի միջոցով իրենց գիտելիքների ծարավն են հագեցնում, օգտվում էլեկտրոնային գրքերից, լաբորատորիաներից,իսկ ձանձրացող սերունդն էլ ուրիշ զբաղմունք չի գտնում և սոցիալական ցանցերում հաղորդակցումներ է փնտրում:Այսօր հնարավոր չէ դեռահասի օրը պատկերացնել առանց համակարգիչների: Չի կարելի չնշել այն փաստը,որ մեր երեխաները մեզնից ավելի լավ են տիրապետում համակարգիչներին: Միևնույն է,անհանգստանալու պատճառ ծնողը ունի ….

Եկեք ծանոթանանք այսօրվա Ժողովի նպատակին և խնդիրներին. /սլայդ 4/

2.Խթանման փուլ- Մտագրոհ մեթոդ

Համացանց բառի մասին արտահայտեք ձեր մտքերը:

Ուղղորդող հարցեր.

- Ի՞նչ է համացանցը:
- Ի՞նչ կարելի է անել համացանցի օգնությամբ:
- Ի՞նչ սոցիալական ցանցեր գիտեք:
- Ի՞նչ սոցիալական ցանցերից եք դուք և ձեր երեխաները օգտվում:



3. Իմաստի ընկալման փուլ

- Վիրտուալ էքսկուրսիա

Իսկ այժմ մի փոքրիկ վիրտուալ էքսկուրսիա կատարենք վիրտուալ աշխարհ :/սլայդ5-6/

Համացանցի ստեղծման պատմությունը

ԱՄՆի պաշտպանության նախարարությունը որոշեց Ամերիկայի համար ստեղծել տեղեկատ վության փոխանցման հուսալի միջոց(պատճառը ակնկալվող պատերազմն էր): Փորձ է արվո ւմ ստեղծել համակարգչային ցանց, որի նախագծումը հանձնարարվում է Լոս Անջելոսի Կալիֆորնիայի համալսարանին, Յուտա նահանգի համալսարանի Ստանֆորդի հե տազոտական կենտրոնին: Վերջիներիս համատեղ ուժերով ստեղծվում է ARPANET կոչվող համակարգչայինցանցը: 1969թ. հոկտեմբերի 29-ը պատմության մեջ հայտնի է որպես ներկայումս Ինտերնետ կոչված երևույթի ստեղծման օր, Հարկ է նշել, որ այս նոր տեխնոլոգիայի ստեղծման նպատակը ոչ թե ժամանակակից միջա զգային ինտերնետային համակարգի ստեղծումն էր, այլ՝ տվյալների տեղափոխման ցանցի զ արգացումը, որը կդիմակայեր նույնիսկ միջուկային հարձակմանը: Այսպիսով, ի սկզբանե այս ցանցը կոչվում էր ARPANET:Այն կազմված էր երկու ցանցերից՝ ռազմական

MILNET և փոքր ARPANET, սակայն ժամանակի ընթացքում թյուրիմացությունից խուսափելու համար այդ երկուսը միասին սկսեցին անվանել INTERNET:

Բացատրական բառարան

Համաշխարհային սարդոստայն Համաշխարհային Սարդոստայնը փոխկապակցված էլեկտրոնային փաստաթղթերի համակարգ է:

Համացանց միմյանց հետ կապակցված համակարգչային ցանցերի ամբողջություն է :

Սպամ Փոստաղբ առևտրական, քաղաքական և այլ ձև գովազդի առաքում կամ այլ տեսակի հաղորդագրությունների առաքում դեպի նրանց, ովքեր չեն ցանկանում ստանալ այն:

Չատ Առցանց զրույց

Վիրուս Համակարգչային վիրուսները սովորական ծրագրեր են, ծրագրավորողների կողմից, որոնք կարող է կառավարել միայն ստեղծողը:

Web ֆորում Հատուկ ծրագրային ապահովում՝ համացանցում վեբ կայքի այցելուների միջև քննարկումներ կազմակերպելու համար:

Կայք տեքստեր, պատկերներ, տեսանյութեր կամ այլ թվային միջոցներ պարունակող փոխկապակցված վեբ-էջերի հավաքածու է:

Վիրտուալ իրականություն Երևակայական իրականություն

Քննարկումներ հետևյալ հարցերի շուրջը

1. Ինչպիսի՞ վերաբերմունք ունեք համացանցի նկատմամբ/դրական ,թե բացասական/:

2. Ձեր երեխան շա՞տ ժամանակ է անց կացնում համակարգչի առջև:

3. Երբևէ տագնապ ապրե՞լ եք,երբ երեխան երկար է նստել համակարգչի առաջ:

4. Ի՞նչ վնաս և ինչ օգուտ կարող է տալ համացանցը: Սլայդ 8

Այո համացանցին		*Ոչ համացանցին*	
1	Հաղորդակցման մեծ հնարավորություն	1	նարկոպրոպագանդա
2	Ինֆորմացիայի ոչ ավանդական աղբյուր	2	Մանկապղծության, պոռնոգրաֆիայի տարածում
3	Հեռահար ուսումնառության հնարավորություն	3	Խաբեբայություններ
4	Լրացուցիչ աշխատաշուկա	4	Լրտեսություն
5	Աշխատանքի արագ կազմակերպում	5	Փոստաղբ
6	Անհատի զարգացման խթանում ❖ Ինքնակրթություն ❖ Ինքնազարգացում ❖ Ստեղծագործական մտքի աճ ❖ Դիտողականություն ❖ Ուշադրության կենտրոնացում ❖ Ինտելեկտի աճ ❖ Հետաքրքրությունների լայն շրջանակ	6	Խաղամոլություն
		7	Համակարգչային կախվածություն
		8	Օգտվողի ֆիզիկական առողջության քայքայում ❑ Հենաշարժիչ համակարգ ❑ Նյարդային համակարգ ❑ Տեսողական զգայարան
		9	Օգտվողի հոգեկան առողջության խաթարում ❑ Ստրեսներ ❑ Ֆոբյաներ

Եկեք շարունակենք մեր էքսկուրսիան /սլայդ10-11/, որպեսզի ընդլայնենք մեր իմացությունը համացանցի մասին :

Առաջադրանքներ ծնողներին-

Փորձել պատասխանել հարցերին / սլայդ11/

1.Ինչպիսի ՝ զգուշացումներ պիտի ունենանք կայքերում գրանցման համար:

2.Ո ՝ ր տվյալները չպետք է տարածենք համացանցում անծանոթների հետ շփվելիս:

3. Ի ՝ նչ պետք է անենք անծանոթ ֆայլերի ստացման ժամանակ:

4. Ի ՝ նչ պետք է անենք անծանոթից նամակ ստանալիս:

5.Ի նչպիսի ՝ քաղաքավարության կանոնների պետք է հետևենք առցանց հաղորդակցման ժամանակ:

6. Ո՝ր տարիքից կարելի է համացանց մտնել:

7. Ի՝նչ տնային կանոններ պետք է սահմանել համացանցի օգտագործման համար:

8.Ինչպիսի ՝ զգուշացումներ պետք է ունենանք web խցիկներից օգտվելիս:

9. Ի՞նչ պետք է իմանալ համակարգչային վիրուսների մասին:

10. Ի ՝ նչ է համացանցային կախվածությունը:

Խնդրահարույց իրավիճակներ /սլայդ12-13/ safe.am կայք

Ինչպե՞ս պետք է վարվի ծնողը ,երբ երեխան հայտնվել է նման իրավիճակներում:

-Այսօրվա մեր ժողովի հյուրն է ինֆորմատիկայի ուսուցչուհին,ով մեզ կներկայացնի համացանցի պոտենցիալ վտանգների և դրանցից մեզ ևմեր երեխաներին պաշտպանելու միջոցների մասին: /սլայդ14-18/

Մենք ծանոթացանք պաշտպանող ծրագրերին:Կարևոր է նաև որոշ կանոնների իմացությունը և դրանց կիրառությունը,որոնց շնորհիվ տանը,դպրոցում,աշխատավայրում կունենանք ապահով համացանց: /սլայդ18-19/

4.Կշռադատման փուլ

Խաղ- Ապահով համացանց

Ծնողները հրավիրվում են Ապահով համացանց ժամանցային խաղին մասնակցելու:

Խաղի հրահանգը-Թելի կծիկով ստեղծել ապահով համացանց :

Խաղի ընթացքը՝

Նետել կարմիր թելի կծիկը իրար,բռնել թելի ծայրը,կծիկը նետել մասնակիցներից որևէ մեկին:Ստեղծվեց համացանց:

Այդ ընթացքում դասղեկը դիտավորյալ նետում է վիրուս, spam կծիկները: Եթե ոչ ոք խայծը կուլ չի տալիս, ոչ ոք չի բռնում կծիկը,ուրեմն ստեղծված համացանցը նաև ապահով է:

Իզուր չի ասվում,նախազգուշացված ես, ուրեմն պաշտպանված ես:Այսօր նախազգուշացրեցինք , մնացածը թողնում ենք Ձեզ՝ ընտրել ,թե չընտրել ապահով համացանց:

5.Անդրադարձ

Նկարենք պաստառ <>Ապահով համացանց>>

Իսկ մեր ժողովի անդրադարձը փորձեք պաստառի վրա նկարել և այն անպայման իր տեղը կունենա մեր դասարանում:Այդ պաստառին նայելով մեր երեխաները ապահով համացանցի մասին կհիշեն ոչ թե տարին մեկ օր,այլ ամեն օր և իրենց պաշտպանված կզգան համակարգչային գրագիտություն ունեցող ծնողների կողքին:

Վերջաբան

Ուզում եմ մեր ժողովը ավարտել Անտուան դը Էկզյուպերի խոսքերով. «Միակ իսկական շքեղությունը հաղորդակցման շքեղությունն է»: Ես Ձեզ ցանկանում եմ շքեղ կյանք, թող այն լինի թեկուզ վիրտուալ: Եվ թող ոչ մի չար ուժ չազդի այդ շքեղության վրա ոչ իրական կյանքում և ոչ էլ վիրտուալ աշխարհում:

Ապրեք ապահով Ձեր ընտանիքում: